րիայի Տ. Նախագահողին առաջադրուեց յայտնել Ցաճկա-հայ սովելոց Տփխիսի Նպաստամատոյց յանձնաժողովին, որ Կովկասեան Տ. Փոխարքան յարգելով ի Տէր հանգուցեալ Տ. Մատթէոս Բ. Հայրապետի 1910 թուի հոկտեմբերի 25-ի, № 2295 միջնորդութիւնը, 1911 թուի փետրուարի 23-ի, № 3821 գրութեամբ թոյլ է տալիս Տփխիսի Նպաստամատոյց Ցանձնաժողովին շարունակել մի տարի ևս հանգանակութեան գործը։

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԴԻՐՆԵՐԻՑ

2 Փետրուարի, թ. 85. Սինոդը լսելով Ներքին գործերի պ. Նախարարի 1910 թ. Նոյեմբերի 22-ի № 10792 առաջադրութիւնը որոշեց. շրջաբերական հրամանով պատուիրել բոլոր Կոնսիստորիաներին, որ նախ՝ եթէ ուղղափառ դաւանութիւնից հայ-լուսաւորչական դաւանութիւն անցած մի անձն, որի պսակը, նրա յանցաւորութեան պատճառով լուծուած է ուղղափառ եկեղեցու վճռով, ցանկանում է նորից պսակուել Հայ եկեղեցու ծիսով, ոչ ուղղափառ դաւանութեան անձնաւորութեան հետ, այդ դէպքում նրա առաջին պսակի լուծման մասին կայացած ուղղափառ հոգևոր Ատեանի վճիռը չէ կարող ծառայել իբրև արգելք նրան, իսկոյն և եթ նոր պսակի թոյլտուութիւն տալու վերաբերմամբ, և այդ թոյլտուութիւնը ամբողջովին կախուած է այն կանոններից, որ ընդունուած են հայ եկեղեցու դաւանութեամբ, և երկրորդ՝ եթէ ուղղափառ եկեղեցու վճռով լուծուած է մի զոյգի պսակ, որոնցից երկուսն էլ պատկանում են այդ եկեղեցուն, այդ դէպքում ամուսնական անհաւատարմութեան մէջ մեղաւոր ճանաչուած անձի համար նշանակուած եկեղեցական ապաշխարանքը պահում է իւր նշանակութիւնը մինչև այն

ժամանակ, մինչ այդ անձնաւորութիւնը ուղղափառ է. իսկ հայ դաւանութիւն ընդունելու դէպքում նրան որոշած ապաշխարանքը այլ ևս պարտաւորեցուցիչ չէ նրա համար, և այդ անձնաւորութիւնը կարող է ամուսնանալ հայ լուսաւորչականի հետ հայ եկեղեցու ծոցը մտնելուց յետոյ անմիջապէս։

16 Փետրուարի, թ. 115. Մինոդը լսելով կաթուղիկոսական Տ. Տեղակալի այս փետրուարի 11-ի, № 1301 առաջադրութիւնը որոշեց. կարգել Բագուի հայոց եկեղեցիների գործակալ Տ. Զաւէն վարդապետին Ղարաբաղի Վիճակային Կոնսիստորիայի նախանդամ, որը թեմի առաջնորդ չլինելու պատճառով պէտք է վարէ Կոնսիստորիայի և տեղական հոգևոր դպրանոցի Հոգաբարձութեան նախագահողի պաշտօնը։ Այս մասին հրամանագրել Շամախու թեմական առաջնորդին, նշանակելով Բագուի քահանաներից մէկին գործակալ մինչև նոյն պաշտօնի համար վարդապետ կարգելը։ Իսկ Ղարաբաղի Կոնսիստորիային հրամանագրել ի գիտութիւն՝ Տ. Զաւէն վարդապետին կարգելու մասին։

16 Փետրուարի, № 116. Մինոդը որոշեց. Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութիւնը նշանակել այս 1911 թ. Դեկտեմբերի 11-ին, կազմելով սահմանուած ձևով ծանուցողական հրովարտակներ, ուղարկել Ս. Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Հայոց Ամենապատիւ Պատրիարքին, Կ. Պոլսոյ ազգային ժողովին, Տանն Կիլիկիոյ Հայոց Վեհաշնորհ Կաթուղիկոսին, Ախթամարայ Հայոց Կաթուղիկոսական տեղապահին, Ռուսաստանի Հայոց թեմական Առաջնորդներին, Տաճկաստանի Հայոց թեմական Առաջնորդներին, Ատրպատականի և Պարսկա-Հնդկաստանի Հայոց թեմական Առաջնորդներին և ընտրութեան մասին յայտնել Կովկասի պ. Փոխարքային։

7 Փետրուարի, թ. 102. Մինոդը լսեց Աստրախանի Կոնսիստորիայի անցեալ Յունվար ամսի 14-ի, № 21 յայտարարութիւնը, նոյն քաղաքի եկեղեցու Հոգաբարձութեան մասին, որոշեց. թոյլ տալ Աստրախանի Ս. Աստուա-

ծածին եկեղեցու դրամագլխից ծախսել 4000 ռուբլի նոյն եկեղեցու նորոգութեան գործը շարունակելու համար, ծխականների ընդհանուր ժողովի որոշման համաձայն։

11 Փետրուարի, թ. 110. Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի անցեալ 1910 թ. Օգոստոսի 30-ի, № 6131 յայտարարութիւնը, Նոր-Բայազիտի գաւառի Թուսկիւլի գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Թուսկիւլի գիւղի բնակիչ Բալաբէկ Ղազարեանցին և առաջադրել Երևանի Փոխ-Թեմակալին քահանայ ձեռնադրել նրան յիշեալ գիւղի համար։

11 Փետրուարի, № 111. Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի անցեալ 1910 թ. Մայիսի 26-ի, № 3783 յայտարարութիւնը Նոր-Բայազիտի գաւառի Փեարիմքեանդ գիւղի համար քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Փեարիմքեանդ գիւղի բնակիչ Աւետիս Տէր Գէորգեանին և առաջադրել Երևանի Փոխ-Թեմակալին ձեռնադրել նորան քահանայ յիշեալ գիւղի համար։